ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/10

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.05.2017թ. թիվ 03/73-3/8986-17 գրությամբ «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 07.05.2017թ. թիվ 5/06.2/50920-17 գրության հիման վրա, 22.05.2017թ. թիվ 03/73-3/8986-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն 15.06.2017թ. թիվ 26557-17 գրությամբ, հայտնել է որ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը 1-ին փուլում գնահատվել է բավարար: Այնուհետև, 06.04.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ին ծանուցել՝ 7, 8, 9, 20 և 21-րդ չափաբաժինների մասով, էլեկտրոնային ձևով ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ Հրավերի Հավելված 5-ով առաջարկված գրությունը, որին անհրաժեշտ է կցել առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2017թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ընկերությանը ծանուցել՝ 7, 8, 9, 20 և 21-րդ չափաբաժինների մասով, էլեկտրոնային ձևով ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ Հրավերի Հավելված 5-ով առաջարկված գրությունը, որին անհրաժեշտ է կցել առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2017թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրվել է, որ 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին, տրվել է շտկման հնարավորություն, սակայն շտկելուց հետո այն կրկին չի համապատասխանել հրավերով նախատեսված պահանջներին:

«Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 51-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ վերջինիս ծանուցումներից հստակ երևում է, որ Ընկերությունից ընդամենը պահանջվել է ներկայացնել որակավորման փաստաթղթերը և ապրանքների տեխնիկական բնութագրերը (06.04.2017թ. թիվ 4 նիստից հետո ուղարկված 06.04.2017թ. ժամը 18:03-ի ծանուցմամբ և թիվ 5 նիստից հետո 10.04.2017թ. ժամը 17:26-ին ուղարկված ծանուցմամբ):

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակիցը ընդգրկվում է եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Ընկերությունը վերը նշված գրությամբ հայտնել է, որ ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացնելուց հետո Ընկերությունը չի ծանուցվել այն մասին, որ կոնկրետ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից երկու անգամ՝ 06.04.2017թ. ժամը 18:03-ին, և 10.04.2017թ. ժամը 17:26-ին, ուղարկվել է ծանուցումներ, որի համաձայն՝ Ընկերությունից պահանջվել է ներկայացնել որակավորման փաստաթղթերը և ապրանքների տեխնիկական բնութագրերը, ինչը և կատարվել է Ընկերության կողմից:

Ընկերությունը Խորհրդին ուղղված մեկ այլ գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

Ընթացակարգի հրավերով սահմանվել է ավտոմեքենայի անիվներ (265/65R17) և (205/60R15) – անվադող համասեզոնային, մարդատար ավտոմեքենաների համար՝ Դանլոփ, Մարշալ, Տոյո, Յոկոհամա կամ համարժեք, այսինքն՝ հրավերով սահմանվել է անվադողերի հատուկ անուններ, որոնք ըստ էության ճապոնական և կորեական արտադրության են, այնինչ՝ Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Ստացվում է, որ ի սկզբանե հրավերով սահմանափակվել է մասնակցի համընկնող հատկանիշներով, սակայն տարբեր երկրների արտադրության ապրանք առաջարկելու

իրավունքը, ինչը անթույլատրելի է և հակասում է Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին, քանի որ ապրանքի անվանումը նշելով անհիմն կերպով բարդանում է հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ բացառությամբ սույն Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝ որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

«Գնումների մասին» << օրենքը չի սահմանում կեղծ բառի իմաստը՝ չկոնկրետացնելով, թե որ դեպքում է մասնակցի ներկայացրած տվյալը համարվում կեղծ:

Համաձայն իրավական ակտերի մասին << օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ եթե նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ իրավական ակտով պետք է տրվեն դրանց սահմանումները:

Իրավական ակտերի մասին << օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի լեզուն պետք է լինի պարզ, հստակ և մատչելի: Իրավական ակտերում չի թույլատրվում բազմիմաստ բառերի ու արտահայտությունների, թաքնված ենթատեքստերի օգտագործումը: Իրավական ակտում բազմիմաստ բառ օգտագործվելու դեպքում պետք է սահմանվի, թե բառը, որ իմաստով է օգտագործվում:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ «Գնումների մասին» << օրենքը հստակ և մատչելի չէ, այն իր մեջ պարունակում է «Կեղծ» բառը և չի սահմանում, թե այդ բառը, որ իմաստով պետք է օգտագործել:

«Իրավական ակտերի մասին» << օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ իրավական ակտը պետք է լինի լիակատար, ավարտված և լիովին կարգավորի ակտով նախատեսված հարաբերությունների բոլոր առանձնահատկությունները:

Այսինքն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքը լիակատար, ավարտված չէ և լիովին չի կարգավորում ակտով նախատեսված հարաբերությունների բոլոր առանձնահատկությունները:

Կեղծ բառի սահմանումը չի տրվում նաև 10.02.2011թ. ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշմամբ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտում պետք է կիրառվեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ:

Տվյալ դեպքում հաշվի առնելով, որ ոչ «Գնումների մասին» ՀՀ օրենքը և ոչ էլ ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշումը չեն սահմանում «Կեղծ» բառի իմաստը, ուստի նշվում է հետևյալը.

Հրաչյա Աճառյանի անվան ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի 97-րդ էջում նշվել է «Կեղծ» բառի իմաստը՝ կեղծ՝ ոչ իսկական, ճշմարտությանը չհամապատասխանող՝ հակասող:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և Հրաչյա Աճառյանի ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի համատեքստում դիտարկելով սույն գործի փաստերը հետևում է, որ «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն չի ներկայացրել որևէ կեղծ՝ իրականությանը չհամապատասխանող տեղեկություն, չի ներկայացրել որևէ կեղծ փաստաթուղթ, մտադրություն է ունեցել ներկայացված փաստաթղթերի հիման վրա ճանաչվել հաղթող և կնքել գործարք, որը կառաջացնի իրավական հետևանքներ:

Այնինչ, Պատվիրատուն գտել է, որ եթե մրցույթի մասնակիցների կողմից ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերով սահմանված ապրանքների բնութագրին, ապա դա նշանակում է, որ մասնակցի կողմից ներկայացվել է կեղծ տվյալ, սակայն դա սուբյեկտիվ կարծիք է և չի բխում օրենքի պահանջից:

Որևէ իրավական ակտով սահմանված չէ, որ եթե մասնակցի ներկայացրած տեղեկությունը ապրանքի արտադրության երկրի անվանումով չի համընկնում հրավերով անհիմն կերպով նախատեսված ապրանքի ծագման երկրի պահանջներին, ապա դա նշանակում է, որ մասնակցի կողմից ներկայացվել է կեղծ տվյալ:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և 168-Ն որոշմամբ սահմանված չէ «Կեղծ» բառի օգտագործման իմաստը, ուստի ոչ ոք չի կարող անձին ենթարկել պատասխանատվության, քանի որ բացառապես ՀՀ օրենքով է սահմանված թե, որ արարքն է համարվում խախտում և որ դեպքում է վրա հասնում պատասխանատվությունը և ոչ թե հիմք է ընդունվում ինչ որ սուբյեկտի ցանկությունը:

Ընկերությունը գտնում է, որ «Արևշաի Սարգիս» ՍՊԸ-ի կողմից թիվ 20-րդ և 21-րդ չափաբաժիններով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում առկա տվյալները կարող էին կեղծ համարվել միայն այն դեպքում, եթե Ընկերության կողմից ապրանքի արտադրության երկիրը նշվեր ոչ թե ՉԺՀ, այլ մեկ այլ երկրի անվանում, որը չհամապատասխաներ իրականությանը, իսկ այս դեպքում Ընկերության կողմից ներկայացված տվյալը չի կարող համարվել կեղծ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.06.2017թ. ժամը 12:15-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է 25.05.2017թ. գրությամբ Խորհրդին ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ բնապահպանության նախարարությունը 07.05.2017թ. թիվ 5/06.2/50920-17 գրությամբ ներկայացրել է ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.06.2017թ. ժամը 12:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ թիվ 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ, քանի որ Ընկերության

կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին:

4. ՍՑ-ԱՄ-2017/10 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/10 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը 1-ին փուլում գնահատվել է բավարար:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2017թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 6.2.3 կետով «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ Ընթացակարգի 7, 8, 9, 20 և 21-րդ չափաբաժինների մասով, ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ Հրավերի Հավելված 5-ով առաջարկված գրությունը, որին անհրաժեշտ է կցել առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 4.3.1 կետով «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն ծանուցվել է Ընթացակարգի 6, 7, 8, 9, 20 և 21-րդ չափաբաժիններով՝ gnumner@yandex.ru էլեկրոնային հասցեին ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ Հրավերի Հավելված 5-ով առաջարկված գրությունը,

որին անհրաժեշտ է կցել առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.04.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 6 արձանագրության 3.2.1 կետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի թիվ 168-Ն որոշման 52-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.1.3 կետի 2-րդ ենթակետը, մերժել է Ընկերության հայտը Ընթացակարգի 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացվել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

6. «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն 15.06.2017թ. թիվ 26557-17 գրությամբ Խորհրդին հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից երկու անգամ՝ 06.04.2017թ. թիվ 4 նիստից հետո ուղարկված 06.04.2017թ. ժամը 18:03-ի ծանուցմամբ և թիվ 5 նիստից հետո 10.04.2017թ. ժամը 17:26-ին ուղարկված ծանուցմամբ, Ընկերությունից պահանջվել է ներկայացնել որակավորման փաստաթղթերը և ապրանքների տեխնիկական բնութագրերը, ինչը և կատարվել է Ընկերության կողմից, սակայն ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացնելուց հետո Ընկերությունը չի ծանուցվել այն մասին, որ Ընկերության կողմից թիվ 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, առկա է անհամապատասխանություն, որը ենթակա է շտկման:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.05.2017թ. թիվ 03/73-3/8986-17 գրությունը, ՀՀ բնապահպանության նախարարության 07.05.2017թ. թիվ 5/06.2/50920-17 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ ***գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկաացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված ***փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի***

պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8.1.2 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու և սույն հրավերի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերի, ***գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Հրավերի 8.1.3 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) ***չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակցին:***

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: ***Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:***

ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ի հայտը 1-ին փուլում գնահատվել է բավարար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2017թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 6.2.3 կետով «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ Ընթացակարգի 7, 8, 9, 20 և 21-րդ չափաբաժինների մասով, ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ Հրավերի Հավելված 5-ով առաջարկված գրությունը, որին անհրաժեշտ է կցել առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 4.3.1 կետով «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն ծանուցվել է Ընթացակարգի 6, 7, 8, 9, 20 և 21-րդ չափաբաժիններով՝ gnumner@yandex.ru էլեկտրոնային հասցեին ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ Հրավերի Հավելված 5-ով առաջարկված գրությունը, որին անհրաժեշտ է կցել առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.04.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 6 արձանագրության 3.2.1 կետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի թիվ 168-Ն որոշման 52-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.1.3 կետի 2-րդ ենթակետը, մերժել է Ընկերության հայտը Ընթացակարգի 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով

նախատեսված պահանջներին և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

«Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ն 15.06.2017թ. թիվ 26557-17 գրությամբ Խորհրդին հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից երկու անգամ՝ 06.04.2017թ. թիվ 4 նիստից հետո ուղարկված 06.04.2017թ. ժամը 18:03-ի ծանուցմամբ և թիվ 5 նիստից հետո 10.04.2017թ. ժամը 17:26-ին ուղարկված ծանուցմամբ, Ընկերությունից պահանջվել է ներկայացնել որակավորման փաստաթղթերը և ապրանքների տեխնիկական բնութագրերը, ինչը և կատարվել է Ընկերության կողմից, սակայն ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացնելուց հետո Ընկերությունը չի ծանուցվել այն մասին, որ Ընկերության կողմից թիվ 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, առկա է անհամապատասխանություն, որը ենթակա է շտկման:

Այսպես, Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ ***գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

Կարգ 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը սահմանում է, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև ***առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:***

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված ***փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով***

ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8.1.2 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու և սույն հրավերի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերի, ***գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Հրավերի 8.1.3 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) ***չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակցին:***

Այսպիսով, վերլուծելով վերագրյալը, Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 13.04.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 6 արձանագրության 3.2.1 կետով կայացված որոշմամբ, մերժելով Ընկերության հայտը՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմնավորմամբ, գործել է գնումների մասին << օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ, քանի որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում՝ Կարգի 51-րդ կետով սահմանված կարգով, հանձնաժողովի քարտուղարը նույն օրն

էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, որից հետո նոր միայն անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ավելին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ, չի արձանագրել դրա հիմնավորումը՝ խախտելով Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված պահանջները, այն է՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերոհիշյալ հիմքերը, գտնում է, որ Ընկերությունը ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2017թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ և 10.04.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ Ընկերությունից պահանջվել է ներկայացնել որակավորման փաստաթղթերը և ապրանքների տեխնիկական բնութագրերը, ինչը և կատարվել է Ընկերության կողմից, սակայն ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացնելուց հետո Ընկերությունը չի ծանուցվել այն մասին, որ Ընկերության կողմից թիվ 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին և վերջինիս Կարգի 51-րդ կետով սահմանված ժամկետում չի տրվել արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն, հետևաբար Ընկերությանն այս հիմքով գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 22.05.2017թ. թիվ 03/73-3/8986-17 գրությամբ «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05525309) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ